

ԲԱՆԿԻ ԿԱՊԻՏԱԼ ԷՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՆԵՐԸ

Է. 3. ՄԱՐԶՊԱՆՑԱԼ

Ինչպես հայտնի է, դեռևս դասական տնտեսագիտության մեջ կար հստակ պատկերացում փոխատվական կապիտալի էության, առանձնահատկությունների, աղբյուրների, փոխակերպումների և սկզբունքային այլ հարցերի վերաբերյալ: Այդուհանդերձ, ինչպես տնտեսական-մեթոդաբանական, այնպես էլ կիրառական ուղղվածության բազմաթիվ հետազոտություններում համեմատաբար քիչ է լուսաբանվել բանկի՝ որպես դեպոզիտավարկավորող հաստատության սեփական կապիտալի բնույթի ու դերի կարևոր հիմնախնդիրը: Ավելին, «բանկի կապիտալ» հասկացության բովանդակությունը հաճախ ներկայացվել է «բանկային կապիտալ» ընդհանուր հասկացության շրջանակներում և բավականին աղավաղված: Բանն այն է, որ բանկի կապիտալը (սեփական միջոցները) չի կարելի միանշանակորեն դիտարկել որպես հավելյալ արժեք բերող հասկացություն, քանի որ բանկային գործունեության մեջ այն հաշվարկային մեծություն է: Դրա հետ մեկտեղ՝ իհարկե, սխալ է նաև այն պնդումը, թե բանկի կապիտալի բաղկացուցիչ տարրերը չեն ապահովում ձեռնարկատիրական եկամուտ: Չէ՞ որ բաժնետերերի դրամական միջոցները, որոնք կազմում են բանկի կանոնադրական կապիտալը և միսիոն եկամուտը (կապիտալի աղբյուրները), փոխառուներին տրվում են որպես վարկ կամ ներդրվում են արժեթղթերում և շուկայական այլ գործիքներում: Սակայն հավելյալ արժեքի ստեղծման տեսանկյունից ոչ մի նշանակություն չունի, թե ո՞ր կապիտալն է ներդրվում՝ սեփական¹, թե՞ ներգրավված: Դրանք միասին կազմում են դրամական այն միջոցների ամբողջությունը, որոնց տնօրինում է բանկը: Երբեմն այն պարզապես անվանվում է բանկային (բանկիրային) կապիտալ: Դա հակասում է բանկային կապիտալի «banking capital»² մարքսյան սահմանմանը, որում այն դիտվում է որպես փոխառված կապիտալ: Բանկի ընդհանուր դրամական կապիտալը վարկային ռեսուրսներ են, որոնց մեծ մասը կազմում է փոխատվական կապիտալը, այսինքն՝ վերադարձելիության, ժամկետայնության և վճարելիության պայմաններով փոխառության տրված դրամական կապիտալը: Հարկ է նշել, որ սեփական և ներգրավված միջոցների ընդհանուր գումարը չի կարող կազմել ամբողջ փոխատվական կապիտալը, քանի որ այդ գումարի որոշ մասը չի ներդրվում, այլ ծախսվում է բանկի կարիքների համար, օրինակ՝ աշխատավարձ, սարքավորումների ձեռքբերում և այլն:

«Փոխատվական կապիտալ» և «սեփական կապիտալ» հասկացությունների սահմանազատումը Կ. Մարքսը մեկնաբանել է հետևյալ կերպ. «Բանկային կապիտալը կազմված է՝ 1) կանխիկ փողից, ոսկուց կամ բանկնոտներից, 2) արժեթղթերից: Սրանք կարող են բաժանվել դարձյալ երկու մասի՝ առևտրաթղթեր, մուրհակներ, որոնք ընթացիկ են, որոնց ժամկետը հասնում է ժամանակ առ ժամանակ, և որոնց գեղչումը կազմում է բանկերի բուն զբաղմունքը, ու հանրային արժեթղթեր, ինչպես պետական թղթեր, գանձարանատոմսեր, ամեն տեսակի ակցիաներ, կարճ ասած՝ զանազան տոկոսաբեր թղթեր, որոնք սակայն էապես տարբերվում են մուրհակներից: Սրանց շարքում կարող են հաշվվել եիպոթեկները ևս: Այս իրեղեն բաղադրամասերից կազմվող կապիտալը նորից տրոհվում է բուն իսկ բանկիրի ներդրած կապիտալի ու ավանդների, որոնք կազմում են նրա banking capital-ը (բանկային կապիտալը) կամ փոխառած կապիտալը: Այսքանը պարզ է, որ բանկիրական կապիտալի իրական բաղադրամասերը - փող, մուրհակներ, ավանդաթղթեր -

¹ Տե՛ս «Большой экономический словарь», М., 1997:

² Տե՛ս Կ. Մարքս, Կապիտալ, 3-րդ հատոր, I մաս, Եր., 1947, էջ 393:

ամենևին չեն փոխվում այն բանի հետևանքով, թե սարդոք այս տարբեր տարրերը ներկայացնում են բանկիրի սեփական կապիտալը, թե ավանդներ՝ ուրիշ մարդկանց կապիտալը: Կապիտալի այս բաժանումը մնում է նույնը, անկախ նրանից, թե իր ձեռնարկությունը բանկիրը վարում է միայն սեփական կապիտալով, թե սոսկ իր մոտ ավանդադրած կապիտալով»¹:

Այսպիսով, բանկային գործի մեջ ներդրված միջոցների բաժանումը սեփականի և ներգրավվածի (փոխառուի) առաջինը կատարել է Մարքսը: Նա բանկի կապիտալը բնորոշում է որպես կանխիկ փող, ոսկի և այլ իրացվելի ակտիվներ, որոնք ներդրված են բանկիրի կողմից, իսկ բանկային (բանկիրային) կապիտալը՝ որպես ներգրավված միջոցներ:

Արտասահմանյան մասնագիտական գրականության մեջ և բանկային պրակտիկայում «capital» (կապիտալ), «equity» (սեփական միջոցներ), «equity capital» (սեփական կապիտալ), «shareholders equity» (բաժնետիրական կապիտալ), «net worth» (զուտ արժեք) եզրույթները սովորաբար դիտարկվում են որպես համարժեք հասկացություններ:

Բանկի կապիտալ (սեփական միջոցներ) հասկացությանը իմաստով մոտ են նաև տնտեսագիտության տեսության մեջ օգտագործվող հետևյալ եզրույթները.

♦ «ակտիվային կապիտալ»², այսինքն՝ այն կապիտալը, որն ազատ է պարտքերից և պարտավորություններից,

♦ «սեփական կապիտալ» (ownership capital, net worth), այսինքն՝

- կազմակերպության սեփականատիրոջ կապիտալը, այն միջոցները, որոնք ձևավորվում են ուղղակի ներդրումների կամ ստացված (չբաշխված) շահույթի մի մասի վերաներդրման եղանակով ³,

- ձեռնարկության ընդհանուր ակտիվների և պարտավորությունների տարբերությունը⁴, որը գոյացնում է սեփականատերերի սեփական միջոցները,

- ակտիվային մասի ձևավորման աղբյուրը, որը գոյացնում է ընդհանուր ակտիվներից հանելով բոլոր պարտավորությունները⁵,

- «կապիտալ», այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ակտիվների և պարտավորությունների տարբերության զուտ արժեքը⁶:

Ըստ վերոնշյալ հասկացությունների՝ կապիտալը ձեռնարկության ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է: Սակայն բանկի հաշվեկշռի պասիվային մասում տեղ են գտնում նաև այնպիսի հոդվածներ, ինչպիսիք են պահուստները (provision), «չպարզված» միջմասնաճյուղային հաշվարկները և միջոցները, որոնք ո՛չ սեփական միջոցներ են, ո՛չ էլ պարտավորություններ:

Բանկային գործունեության միջազգային փորձը վկայում է, որ վարկային կազմակերպության կապիտալի մեջ ներառվում են բաժնետիրական կապիտալի անվանական գումարը, բաժնետոմսերը անվանական արժեքից բարձր գնով վաճառելուց ստացված հիմնադրական շահույթը (եմիսիոն եկամուտը), չբաշխված շահույթը, ստորադաս պարտավորությունները, ընդհանուր և այլ տիպի պահուստները, ինչպես նաև այլ միջոցները:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ բանկային գործի ժամանակակից տեսության մեջ առկա է բանկի կապիտալի բնութագրման երկու հայեցակարգային հասկացություն⁷.

¹ Նույն տեղում, II մաս, եր., 1949, էջ 3-4:

² Sb' u Л. П. Кураков, В. Л. Кураков, Калитал // Словарь-справочник по экономической теории, М., 1999:

³ Sb' u «Большой экономический словарь», М., 1997:

⁴ Sb' u Л. П. Кураков, В. Л. Кураков, նշվ. աշխ.:

⁵ Sb' u М. Ю. Агафанова, А. Н. Азрилян, под ред. А. Н. Азриляна, Калитал // Большой экономический словарь, М., 1997:

⁶ Sb' u Г. Ц. Вечканов, Г. Р. Вечканов, В. Т. Пыляев, Калитал // Краткая экономическая энциклопедия, СПб., 1998:

⁷ Sb' u А. Ю. Симановский, Базельские принципы эффективного банковского надзора и их реализация в России, - «Деньги и кредит», 2001, № 1:

1. կարգորոշյալ կապիտալ. որոշակի եղանակով հաշվարկված կապիտալն է, որը կարգավորող մարմնի պահանջի համաձայն պետք է գտնվի վարկային կազմակերպության տնօրինության ներքո՝ համապատասխան գործառնություններն իրականացնելու համար (տվյալ դեպքում կարևոր չէ, թե ինչի հիման վրա է այդ մարմինը պահանջում կապիտալի հենց այդ մեծությունը),

2. տնտեսական կապիտալ. դա այն է, որն անհրաժեշտ է կոնկրետ բանկին վերաբերող ռիսկերի ծածկման համար, և որը կարող է հաշվարկվել այլընտրանքային եղանակով, այսինքն՝ ոչ այն մեթոդով, որը կիրառում են կարգավորող մարմինները:

Սովորաբար ընդունված է այն տեսակետը, որ առևտրային բանկի կապիտալի գերխնդիրը մեկն է՝ ապահովել նրա հավասարակշռված ու կայուն կենսագործունեությունը¹⁰: Այդ գերխնդրի լուծման համար այն պետք է իրականացնի հետևյալ գործառնությունները.

I. Ապահովի անհրաժեշտ միջոցներ բանկի ստեղծման, կազմակերպման և գործառնության համար մինչև բավականաչափ ծավալի դեպոզիտների ներգրավումը: Այս գործառնության շրջանակներում իրացվում է վարկային կազմակերպության սեփական միջոցներ ստեղծելու պահանջարկը: Արդյունքում ձևավորվում է կանոնադրական կապիտալը (ownership capital)¹¹՝ դրամական միջոցների և նյութական ակտիվների ամբողջությունը, որը բանկի ստեղծման ժամանակ ներդրվում է հիմնադիրների կողմից որպես ընդհանուր ունեցվածք:

Միջոցների ներգրավման և տեղաբաշխման գործունեությունն սկսելու համար վարկային կազմակերպությունը պետք է ունենա պետական գրանցում և ստանա բանկային գործունեություն իրականացնելու թույլտրագիր, որի համար անհրաժեշտ է գնել (կառուցել կամ վարձակալել) համապատասխան շինություն կամ ընդունել այն որպես ներդրում կանոնադրական կապիտալում: Շինությունը պետք է կահավորված լինի համապատասխան սարքավորումներով:

Բանկային ծառայությունների շուկայում մրցունակ բանկային արտադրանք թողարկելու, առաջարկելու և իրացնելու համար բանկը պետք է տիրապետի բարձր տեխնոլոգիաների, ինչը հատկապես կարևոր է գործունեության սկզբնական փուլում: Ծրագրային ապահովվածություն ձեռք բերելու, կապի, տեղեկատվական և առևտրային համակարգերին միանալու համար անհրաժեշտ են դրամական միջոցներ:

Վարկային կազմակերպությունների գործունեությունն անհնար է առանց որակյալ աշխատակազմի, որի վարձումը սկզբնական փուլում մույնպես իրագործվում է սեփական միջոցների հաշվին:

II. Ստեղծի անհրաժեշտ պայմաններ կազմակերպական աճի և նոր ծառայությունների, ծրագրերի ներդրման և սարքավորումների նորացման համար: Կապիտալը՝ որպես կազմակերպական աճի, մշակումների և նոր բանկային տեխնոլոգիաների ներդրման համար միջոցների աղբյուր, երկակի բնույթի է և կարող է դրսևորվել որպես նրա տարբեր բաղադրիչների, օրինակ՝ կանոնադրական կապիտալի (էմիսիոն եկամտի հետ միասին) ու հիմնադրամների գործառնություն:

Առաջին դեպքում կազմակերպական և տեխնոլոգիական աճը ապահովվում է այն միջոցներով, որոնք ներգրավվում են որպես բանկի հիմնադիրների դրամական և նյութական ներդրումներ նրա կանոնադրական կապիտալի ձևավորման և ավելացման շրջանակներում:

Երկրորդ դեպքում, երբ կապիտալի կազմում առկա են այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են հիմնադրամները, ներուժային հնարավորություններ են ստեղծվում տեխնոլոգիական և կազմակերպական բազայի ընդլայնման համար (թրթակցային հաշիվներում միջոցների առկայության դեպքում), քանի որ բանկային վերահսկողության մարմինները հաշվապահական ընթացակարգի միջոցով կարգավորում են հիմնական միջոցներում

¹⁰ Տե՛ս Ս. Ց. Քոյս, *Банковский менеджмент. Предоставление финансовых услуг*, М., 1997, էջ 768:

ռեսուրսների հատկացման ծավալները: Այսինքն՝ կապիտալ ներդրումների, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման ծավալները չպետք է գերազանցեն դրանց աղբյուրների՝ մաշվածության և հիմնադրամների (բանկի հիմնադրամները ձևավորվում են ստացված շահույթից) արժեքը:

III. Շահի և ամրապնդի բանկի (նրա ֆինանսական կայունության) հանդեպ հաճախորդների վստահությունը: Այս գործառույթի իրականացումը պայմանավորված է նրանով, որ ավելի մեծ կապիտալով բանկն ավելի մեծ երաշխիքներ ունի շահելու հաճախորդների վստահությունը: Դա, մասնավորապես, ուղղակի գործառնական կախման ձևով ներկայացված է ամերիկացի տնտեսագետ Էդվարդ Քեյնի առաջարկած բանաձևում¹¹.

Վարսահություն = f(սեփական կապիտալ, եկամուտների կայունություն, փոփոխարկության որակ, պեկանական երաշխիքների շուկայական արժեք):

Եթե հաշվի չառնենք կառավարության երաշխիքները, որոնք կախված չեն բանկի կառավարիչների որոշումներից, և ենթադրենք, որ բոլոր բանկերի վերաբերյալ տեղեկատվությունը նույն որակի է, ապա կարելի է այնդե, որ միայն կապիտալը և եկամուտների կայունությունն են պայմանավորում բանկի նկատմամբ վստահության աստիճանը: Իսկ դրանք արդեն այն գործոններն են, որոնք զգալի չափով կախված են կառավարիչների ընդունած որոշումներից:

Կապիտալի և մյուս երեք փոփոխականների փոխկապվածությունից հետևում է, որ դրանցից ցանկացածի վատթարացման դեպքում կապիտալի մեծությունը պետք է աճի՝ հնարավոր կորուստը փոխհատուցելու համար: Բոլոր երեք գործոնների միաժամանակյա փոփոխության դեպքում վստահության մակարդակը կախված կլինի այդ փոփոխականների փոխհարաբերակցությունից: Սակայն, ամեն դեպքում, եթե տեղեկատվության որակը, եկամուտների մակարդակը և կառավարության երաշխիքների հուսալիությունը նվազում են, ապա կապիտալը պետք է աճի:

IV. Կատարի ինքնատիպ կարգավորիչի դեր, որը կապահովի բանկի աճի և կենսունակության համապատասխանությունը երկարաժամկետ հեռանկարում: Չորրորդ գործառույթը բխում է կարգավորող հաստատությունների և ֆինանսական շուկաների պահանջներից, այն հաշվով, որ վարկերը, այլ ռիսկային ակտիվները և բանկի կապիտալը փոփոխվեն մոտավորապես նույն տեմպերով: Այն բանկը, որը չափազանց արագ է ընդլայնում իր վարկերը և ռեպորտները, շուկայից և կարգավորող մարմիններից ազդանշաններ կստանա այն մասով, որ կա՛մ պետք է դանդաղեցնել դրանց աճը, կա՛մ ներգրավել լրացուցիչ կապիտալ: Պարտավորությունների ու ռիսկային ակտիվների աճի տեմպերի և բանկային կապիտալի չափի հաստատատասխանության պահանջը սահմանվում է նորմատիվների միջոցով: Նշված նորմատիվները չկատարելու դեպքում վարկային կազմակերպության նկատմամբ կիրառվում են ազդեցության միջոցներ: Բանկի ակտիվային և պասիվային գործարքների գրեթե ամբողջ ծավալը կաշրված է նրա սեփական միջոցների մեծությունից, հետևաբար բանկի գործունեության ընդլայնումը հնարավոր չէ առանց նրա կապիտալի աճի:

V. Ծառայի որպես «սև օրվա փող», այսինքն՝ ընթացիկ կորուստները ֆոխհատուցելով՝ զերծ պահի սնանկացումից մինչև ծագած խնդիրների լուծումը: Բանկերը սեփականացումից պաշտպանող կապիտալի ֆունկցիան բավական վիճելի է: Սակայն, ենթադրյալով, որ բանկը սնանկանում է բանկային ռիսկերի ազդեցության հետևանքով, կարելի է եզրակացնել, սնանկացումից պաշտպանությունը իրատեսական է միայն իրացվելիության նվազման ռիսկը նվազագույնի հասցնելու պարագայում: Իսկապես, հաշվեկշռի բանաձևի համաձայն, բանկի ակտիվները հավասար են պարտավորությունների, կապիտալի և ճշգրտվող գումարի ընդհանուր մեծությանը: Ծշգրտվող գումարի չափը, որպես կանոն, աննշան է:

¹¹ St' Edward J. Kane, Competitive Financial Reregulation, An International Perspective, Ohio State University, 1986:

Կապիտալի բացակայության պարագայում ներգրավված միջոցները կհավասարվեին բանկի ակտիվներին: Այսինքն՝ 100% պահանջներին կհամապատասխանեին 100% պարտավորություններ, ինչը անհրաժեշտաբար կպահանջեր խստիվ հաշվեկշռել ակտիվների և պասսիվների մարման ժամկետները: Դա նշանակում է, որ կապիտալի մեծության նվազումը հանգեցնում է բանկի կողմից իրացվելիության նվազման ռիսկի մեծացմանը: Բացի այդ, կապիտալի չափը պայմանավորում է հենց բանկի վճարունակությունը:

Այսպիսով, վերը նշված ֆունկցիաները պայմանավորում են այն դերն ու նշանակությունը, որը տրվում է բանկի կապիտալի մեծությանը: Ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականում բանկի գործունեության արդյունավետությունը և կայունությունը մեծ չափով կախված են նրա տնօրինած կապիտալի մեծությունից:

Բանկի սեփական միջոցները կազմում են նրա կողմից գործառնության մեջ դրված բոլոր միջոցների միայն մի փոքր մասը: Այսպես, 1960 - 1999 թթ. ԱՄՆ-ում ավանդներ ապահովագրող առևտրային բանկերի համախառն հաշվեկշռում կապիտալի բաժինը կազմել է 5,5 - 8,5%, իսկ առանձին տարիների՝ 5%-ից էլ քիչ¹²: Խոշոր բանկերում այդ ցուցանիշը նույնիսկ ավելի ցածր է: Օրինակ՝ Deutsche Bank խմբի սեփական միջոցները 1998թ. վերջին կազմում էին հաշվեկշռի գումարի 2.8%-ը¹³: Հայաստանում 2004թ. վերջին ընդհանուր բանկային համակարգի կապիտալը կազմել է հաշվեկշռների գումարի 17.8%-ը: Առևտրային բանկերի ռեսուրսներում կապիտալի ցածր տեսակարար կշիռը առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ շուկայական տնտեսությունում բանկերը կատարում են ֆինանսական միջոցադրի դեր: Դա հնարավորություն է տալիս նրանց ներգրավել ազատ դրամական միջոցների և խնայողությունների խոշոր գումարներ և ներդնել դրանք տարբեր տեսակի եկամտաբեր ակտիվներում: Ներգրավված միջոցները, որպես կանոն, բանկի վրա ավելի էժան են նստում, քան բաժնետոմսերի բողարկումը: Բացի դրանից, բանկերի սեփական միջոցների ծավալի մեծացումը կապված է մի շարք բարդությունների հետ:

Այդ պատճառով տնտեսական գործունեության այլ ճյուղերի ձեռնարկությունների համեմատ բանկերն ունեն շատ ավելի բարձր լեներջ՝ ցուցանիշ, որը բնութագրում է հաշվեկշռի պասսիվային մասում փոխառու և սեփական միջոցների հարաբերակցությունը: Խոշոր բանկերը գործառնական գործունեության ընթացքում կարող են զգալիորեն փոփոխել լեներջի մակարդակը: Գործառնությունների եկամտաբերության նվազման դեպքում նրանք պարտատոմսերի բողարկման կամ միջբանկային շուկայում վարկերի ստացման միջոցով կարող են ներգրավել լրացուցիչ փոխառու միջոցներ: Մանր ու միջին բանկերի մանկրելու հնարավորությունը շատ ավելի սահմանափակ է: Մի կողմից՝ նրանց ակտիվների պորտֆելը քիչ է բազմազանեցված, մյուս կողմից՝ մուտքը դեպի փոխատվական կապիտալի շուկա չափազանց դժվար է կամ ընդհանրապես հնարավոր չէ: Այդ պատճառով էլ նրանց լեներջը, որպես կանոն, ավելի ցածր է:

1960-ական թվականների կեսերից նկատվող՝ առևտրային բանկերի սեփական միջոցների հարաբերական նվազման միտումը հիմնականում բացատրվում է եկամտաբերության ցուցանիշների բարձրացման ձգտմամբ: Այդ ժամանակահատվածում բանկերը պարտադրված էին զգալիորեն փոքրացնել գործառնական եկամտների հիմնական աղբյուր հանդիսացող գուտ տոկոսային մարժան և, ընդհակառակը, մեծացնել լեներջը: Դրան նպաստում էին իրավիճակային և երկարաժամկետ մի շարք գործոններ, ինչպիսիք են՝ բանկային բիզնեսի ավանդական ոլորտ ներխուժած ոչ բանկային վարկային հաստատությունների հետ մրցակցության ուժեղացումը, բանկային վարկի՝ որպես կորպորացիաների արտաքին ֆինանսավորման աղբյուրի դերի նվազումը, բանկային ակտիվների ապահովվածության մակարդակի բարձրացումը և այլն: Դա, իհարկե, բանկերին հնարավորություն է տալիս ստանալ ավելի մեծ գուտ շահույթ: Միաժամանակ, բարձր լեներջը

¹² Sh'u B. M. Усоскин, Базельские стандарты адекватности банковского капитала: эволюция подходов, - «Деньги и кредит», 2000, N 3:

¹³ Sh'u Deutsche Bank, Annual Report for 1998:

վկայում է այն մասին, որ բանկն ավելի մեծ ռիսկի է դիմում, քանի որ ակտիվների յուրաքանչյուր միավորին բաժին է ընկնում ֆինանսական պարտավորությունների ավելի մեծ զումար:

Բանկային համակարգի գործունեության կարգավորման շրջանակներում բանկերի՝ իրենց վրա չափազանց մեծ ռիսկեր վերցնելը կանխելու նպատակով պետությունները սահմանում են որոշակի ստանդարտներ (նորմատիվներ)՝ վարկային կազմակերպությունների նվազագույն բավարար կապիտալի վերաբերյալ: Որպես կանոն՝ նոր ստեղծվող բանկերի համար այդ ստանդարտները դրամական արտահայտությամբ սահմանում են նախասկզբնական, մեկնարկային կապիտալի նվազագույն չափը, իսկ գործող բանկերի համար՝ կապիտալի համարժեքության (բավարարության) նորմատիվը:

Այսպիսով, բանկերի կապիտալի մեծության որոշման և կարգավորման նպատակահարմարությունը օբյեկտիվ է և ակնհայտ: Բանկի կապիտալը (սեփական միջոցները) հաշվարկային կարևոր ցուցանիշ է, որի արժեքն օգտագործվում է մի կողմից՝ կարգավորող մարմինների կողմից բանկերին արդյունավետորեն վերահսկելու նպատակով (կարգորոշյալ կապիտալի հայեցակարգ) և մյուս կողմից՝ իենց իրենց՝ վարկային կազմակերպությունների կողմից ռիսկերի որոշման ու նվազեցման նպատակով (տնտեսական կապիտալի հայեցակարգ):

Э. А. МАРЗПАНЯН - *Капитал банка: сущность и функции.* - В статье рассматриваются методологические подходы к определению сущности собственного капитала коммерческого банка. Представлены концепции регулятивного и экономического капитала, применяемые при определении достаточности собственных средств.

Капитал коммерческого банка выполняет функцию обеспечения долгосрочной жизнедеятельности, а именно: 1) представляет собой средства, необходимые для создания, организации и функционирования банка до привлечения достаточного количества депозитов; 2) обеспечивает условия для организационного роста и разработки новых услуг, программ и обновления оборудования в дальнейшем; 3) поддерживает доверие клиентов к банку (его финансовой устойчивости); 4) служит своеобразным регулятором, приводящим в соответствие рост и жизнеспособность банка в долгосрочной перспективе; 5) является “деньгами на черный день” — защищает от банкротства, компенсируя текущие потери до разрешения возникших проблем.